

**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՆԱՆՁՆԱԺՈՂՈՎ**



**Նայասրանի Նանրապետությունում ջերմային էներգիայի
արտադրության գործունեության**

Լ Ի Ց Ե Ն Ձ Ի Ա

№ 0014 (9 էջից)

**Տրվում է «Երևանի Ջերմային Էլեկտրակայան» պետական
փակ բաժնետիրական ընկերությանը՝ 5 փարի ժամկետով
Նայասրանի Նանրապետության էներգետիկայի
հանձնաժողովի 1999թ. հունիսի 10-ի № 8-3 որոշմամբ**

**Նայասրանի Նանրապետության
էներգետիկայի հանձնաժողովի նախագահ**

Կ.Տ.

Վ. Մովսեսյան

« 28 » հունիս 1999 թ.

ԵՐԵՎԱՆ - 1999 թ.

**«Երևանի Ջերմային Էլեկտրակայան» պետական փակ
բաժնետիրական ընկերության կողմից ջերմային
էներգիայի արտադրության լիցենզավորված
գործունեությունն իրականացնելու**

Պայմանները

**(Լիցենզիա № 0014, տրված ՆՇ Էներգետիկայի
հանձնաժողովի 1999թ. հունիսի 10-ի № 8-3
որոշմամբ)**

1. Սահմանումներ

Հանձնաժողով - ՆՇ Էներգետիկայի հանձնաժողով՝ Էներգետիկայի բնագավառում կարգավորող մարմին, որը գործում է «Էներգետիկայի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքով Նայաստանի Նանրապետության կառավարության կողմից իրեն պատվիրակված լիազորությունների հիման վրա:

Լիցենզիա - Հանձնաժողովի կողմից իրավաբանական անձին տրված փաստաթուղթ, որը հավաստում է Էներգետիկայի բնագավառում սահմանված պայմաններով որոշակի գործունեություն իրականացնելու իրավունք:

Փոխադրող - ջերմային էներգիայի փոխադրման Լիցենզիա սրացած իրավաբանական անձ:

Բաշխող - իրավաբանական անձ, որին Հանձնաժողովի կողմից տրվել է ջերմային էներգիայի տեղափոխման և (կամ) բաշխման գործունեություն իրականացնելու Լիցենզիա:

Լիցենզավորված անձ - Էներգետիկայի բնագավառում սույն Լիցենզիայով ջերմային էներգիայի արտադրական գործունեություն իրականացնելու իրավունք սրացած իրավաբանական անձ:

Սպառող (բաժանորդ) - ջերմամատակարարող ձեռնարկության ջերմային ցանցին «Ջերմային էներգիայից օգտվելու» կանոնների և այլ նորմատիվ ակտերի պահանջներին և տեխնիկական պայմաններին համապատասխանող միացում ունեցող և ջերմամատակարարող ձեռնարկության հետ ջերմային էներգիայի մատակարարման /առք ու վաճառքի/ պայմանագիր կնքած իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

Ֆորս մաժոր - Արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների (տարերային աղետներ, ռազմական գործողություններ, էներգոռեսուրսների (վառելիքի, ջրի)

մաքակարարման համակարգերի վթարներ, Նայասրանի Նանրապետության օրենսդրությամբ սահմանված սահմանափակումներ), Կվյալ պայմաններում Լիցենզավորված անձից անկախ առաջացած անհաղթահարելի ուժի հետևանքներ, որոնք մասամբ կամ ամբողջությամբ, անհնար են դարձնում լիցենզավորված գործունեության իրականացումը:

2. Լիցենզիայի գործողության ժամկետը

- 2.1. Սույն Լիցենզիան ուժի մեջ է մտնում Նանձնաժողովում գրանցման պահից:
- 2.2. Սույն Լիցենզիան գործում է «_____» փարի ժամկետով:

3. Լիցենզավորված գործունեություն իրականացնելու հողափարածք

- 3.1. Սույն Լիցենզիայով Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունն իրականացնում է սահմանված կարգով իրեն արտոնված հողափարածքում:*

4. Լիցենզավորված գործունեություն իրականացնելու էներգափողակայանքներ

- 4.1. Սույն Լիցենզիայով Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունը իրականացնում է կից հավելվածում նշված էներգափողակայանքներով:

5. Լիցենզավորված գործունեության բովանդակությունը

- 5.1. Սույն Լիցենզիայով Լիցենզավորված անձին, Լիցենզիայի պայմանների իրականացման համար անհրաժեշտ էներգափողակայանքների շահագործումն ուժի մեջ մտնելու պահից, իրավունք է տրվում իրականացնել ջերմային էներգիայի արտադրություն, Փոխադրողին և(կամ) Բաշխողին և(կամ) Սպառողներին վաճառք՝ սույն Լիցենզիայի պայմաններին համապատասխան:
- 5.2. Լիցենզավորված անձը իրավունք չունի լիցենզավորված գործունեության էությունը կազմող 5.1 կետում նշված որևէ գործառույթ պայմանագրով կամ որևէ այլ կարգով փոխանցել (օտարել) այլ անձի:

6. Լիցենզավորված գործունեության պայմանները

- 6.1. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի սույն Լիցենզիայի, Նանձնաժողովի կողմից սահմանված իրավական ակտերի և Նայասրանի Նանրապետության օրենսդրության պահանջներին:

* Նողափարածքի հարկացման արտոնագիրը (թույլտվությունը) և գլխավոր հարակազիձը կցվում են Լիցենզիային, որպես հավելված:

- 6.2. Լիցենզավորված անձը Լիցենզավորված գործունեությունը պետք է իրականացնի փնտրական արդյունավետության սկզբունքներին, Նայասփանի Նանրապետության գործող ստանդարտներին, անվտանգության տեխնիկայի նորմերին և հուսալիության ցուցանիշներին համապատասխան, ապահովելով ջերմային էներգիայի առաքման (վաճառքի) պայմանագրային պարտավորությունների կատարումը:
- 6.3. Լիցենզավորված անձը չպետք է խոչընդոտի կամ փորձի խոչընդոտել այլ լիցենզավորված անձանց գործունեությունը և մրցակցությունը ջերմային էներգիայի արտադրության ոլորտում:
- 6.4. Լիցենզավորված անձն իր գործունեությունն իրականացնելիս՝ պարտավոր է ապահովել մարդկանց կյանքի և առողջության անվտանգությունը, ինչպես նաև գույքի պահպանությունը՝ Նայասփանի Նանրապետության օրենսդրությանը համապատասխան:
- 6.5. Լիցենզավորված անձն առանց Նանձնաժողովի թույլտվության չի կարող դառնալ Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի բաժնետեր, փայտեր կամ միավորվել Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ:
- 6.6. Լիցենզավորված անձի կանոնադրական հիմնադրամում 35 տոկոսից ավելի մասնակցություն ունեցող բաժնետեր կամ փայտեր իրավունք չունի առանց Նանձնաժողովի թույլտվության ձեռք բերել է Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի բաժնետեր, բաժնեմաս կամ ունենալ փայտամասնակցություն:
- 6.7. Լիցենզավորված անձի և Լիցենզիա ունեցող այլ անձանց, ինչպես նաև Սպառողների հետ կնքվող էներգամատակարարման (առք ու վաճառքի) պայմանագրերը պետք է համապատասխանեն Նանձնաժողովի կողմից սահմանված պայմանագրերի օրինակելի ձևերին:
- 6.8. Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում լիցենզավորված գործունեություն իրականացնող այլ անձանց միջև կնքվող էներգամատակարարման (առք ու վաճառքի) պայմանագրերը ենթակա են գրանցման Նանձնաժողովում:
- 6.9. Լիցենզավորված անձը, Նանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, Նանձնաժողով է ներկայացնում տեղեկատվություններ և հաշվետվություններ՝
- բանկերում ունեցած հաշիվների մասին,
 - տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների կողմից կատարված սրուգումների արդյունքների մասին,
 - անցած ժամանակաշրջանի գործունեության մասին,
 - հաջորդ հաշվարկային ժամանակաշրջանի տեխնիկա - փնտրական ցուցանիշների կանխատեսումների մասին,
 - երկարաժամկետ և կարճաժամկետ վարկային ծրագրերի մասին,
 - տեխնիկական վերակառուցման, վերականգնման և արդիականացման երկարաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերի և դրանց իրականացման ֆինանսական ներդրումների մասին:

Ներկայացված ֆինանսադրամային ծրագրերը պետք է հիմնավորված լինեն համապարասխան հաշվարկներով և ենթակա են համաձայնեցման Տանձնաժողովի հետ:

- 6.10. Լիցենզավարված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է համապարասխանեն Տայասրանի Տանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառման պահանջներին:
- 6.11. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է սահմանազարված լինեն Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից և հաշվետվությունից:
- 6.12. Լիցենզավորված անձը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 30-ը հանրապետա-կան մամուլում հրապարակել նախորդ տարվա իր գործունեության հաշվետվությունը՝ համաձայն Տանձնաժողովի կողմից սահմանված ձևերի: Տրապարակված հաշվետվությունները չպետք է պարունակեն պետական և ծառայողական գաղտնիքներ:
- 6.13. Լիցենզավորված անձը պարտավոր է Տանձնաժողովի պահանջով իրականացնել իր ֆինանսադրամային գործունեության անկախ աուդիտ:
- 6.14. Լիցենզավորված անձը, Տայասրանի Տանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, պարասխանարվություն է կրում Տանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության հաշվետվության և այլ տեղեկատվության հավաստիության համար:
- 6.15. Ջերմային էներգիայի առավելագույն սակագները սահմանում է Տանձնաժողովը: Լիցենզավորված անձը կարող է կիրառել Տանձնաժողովի կողմից սահմանված սակագներից ցածր սակագներ, «Էներգետիկայի մասին» Տայասրանի Տանրապետության օրենքին համապարասխան: Տանձնաժողովի կողմից սահմանված սակագնից ցածր սակագներ կիրառելու հետևանքով Լիցենզավորված անձի հնարավոր վնասները հաշվի չեն առնվում սակագների վերանայման ժամանակ:
- 6.16. Լիցենզիայի գործողության ընթացքում Լիցենզավորված անձն իր նախաձեռնությամբ, Տանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապարասխան, կարող է հայտ ներկայացնել գործող սակագների վերանայման վերաբերյալ:
- 6.17. Տանձնաժողովն իր նախաձեռնությամբ և իր կողմից սահմանված ընթացակարգով կարող է վերանայել ջերմային էներգիայի սակագները (սակագները):
- 6.18. Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեության հետ կապված ծախսերն իրականաց-նում է համաձայն սակագնի մեջ ընդգրկված ծախսերի համապարասխան հոդվածների (ուղղությունների), ապահովելով շահագործման հուսալիությունն ու անվրանգությունը: Ծախսերի կառուցվածքի փոփոխության անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը համապարասխան հիմնավորումներով նախապես դիմում է Տանձնաժողով՝ համաձայնեցման համար:
- 6.19. Տանձնաժողովը սակագների մեջ հաշվի է առնում միայն այն ծախսերը, որոնք հիմնավորված և անհրաժեշտ են լիցենզավորված գործունեությունն իրականացնելու համար:

- 6.20. Լիցենզավորված անձը պարտավոր է Նանձնաժողովին համապատասխան հիմնավորմամբ գրավոր հայտնել՝
- րվյալ փարում կնքված պայմանագրերով Սպառողներին ջերմամաքակարարման սահմանափակման իր մրադրությունների մասին, ոչ պակաս, քան 6 ամիս առաջ,
 - հաջորդ փարում ջերմային էներգիայի արտադրության ծավալների կրճատման իր մրադրությունների մասին, ոչ պակաս, քան օրացուցային փարին սկսվելուց 9 ամիս առաջ,
 - իր կողմից ջերմային էներգիայի արտադրության սահմանափակման հանգեցրած (հանգեցնող) չկանխարեսված հանգամանքների մասին՝ անհապաղ:
- 6.21. Լիցենզավորված անձը պարտավոր է կատարել ջերմային էներգիայի փոխադրման գանցի կենտրոնական կարգավարական ծառայության օպերատիվ հրահանգները և կարգադրությունները՝ ըստ գործող կարգի և նրա հետ կնքված պայմանագրի դրույթների:
- 6.22. Լիցենզավորված անձը պարտավոր է անմիջապես հայտնել Նանձնաժողովին այն հանգամանքների մասին, որոնք բերել են կամ կարող են բերել սույն Լիցենզիայի պայմանների խախտումների:

7. Լիցենզավորված գործունեության վերահսկում

- 7.1. Սույն լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումը Նանձնաժողովը իրականացնում է իր կողմից սահմանված կարգով:
- 7.2. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումը ապահովելու նպատակով Նանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչները ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի փարածք:
Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Նանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:
- 7.3. Նանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի փարածքում պահպանում են ընկերության ներքին կանոնակարգը, անվտանգության և հակահրդեհային փեխնիկայի կանոնները, ինչպես նաև ՏՏ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

8. Տուգանքներ, կասեցում և զրկում

- 8.1. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումը իրականացվում է Նանձնաժողովը՝ համագործակցելով պետական այլ իրավասու մարմինների հետ:
- 8.2. Լիցենզիայի պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքում, ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածով, Նանձնաժողովը իրավասու է կիրառել հետևյալ փուլերը.

ա). նախազգուշացում և խախտումները վերացնելու հանձնարարականներ,

- բ). Լիցենզիայի կասեցում,
- գ). Լիցենզիայից զրկում,

Նշված փուլերի կիրառման կարգը սահմանում է Նանձնաժողովը:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Նանձնաժողովը կարող է փուլանել Լիցենզավորված անձին:

- 8.3. Լիցենզավորված անձին Լիցենզիայից զրկելու դեպքում Նանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» ՆՏ օրենքի 37 հոդվածով և ՆՏ օրենսդրությամբ:
- 8.4. Լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա: Մինչև Լիցենզիայի կասեցման կամ զրկման մասին Նանձնաժողովի համապատասխան որոշում կայացնելը, Լիցենզավորված անձը պարտավոր է շարունակել իրականացնել գործունեությունը՝ համաձայն Լիցենզիայի պայմանների:
- 8.5. Լիցենզավորված անձի վրա 8.2 կետով նախատեսված փուլերը չեն փարսվում, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները ֆորս մաժորային հանգամանքների հետևանք են:

9. Լիցենզիայի դրույթների և պայմանների փոփոխություն

- 9.1. Լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել օրենքով սահմանված կարգով, Լիցենզավորված անձի կամ Նանձնաժողովի նախաձեռնությամբ:
- 9.2. Լիցենզավորված անձի իրավական-կազմակերպական ցանկացած փոփոխության դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է Լիցենզիայի վերագրանցման կամ նրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու կամ նոր Լիցենզիա ստանալու հայրով անհապաղ դիմել Նանձնաժողով:
- 9.3. Լիցենզավորված անձը 5-օրյա ժամկետում ծանուցագրով փեղեկացնում է Նանձնաժողովին իր հիմնադիր փաստաթղթերում, իրավաբանական հասցեի, և բանկային հաշվեհամարների փոփոխությունների մասին:

10. Այլ պայմաններ

11. Ծանուցում

11.1. Լիցենզիայի վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ հաղորդագրությունները պետք է լինեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով կամ պարզվիրված նամակով: Ցանկացած ծանուցում կամ հաղորդագրություն ուժի մեջ կհամարվի սրացման պահից կամ, եթե այն չի սրացվել հասցեատիրոջ մեղքով՝ ներկայացման պահից:

Լիցենզավորված անձի փոստային կարգաթիվը 375053

Նասցեն ք.Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ. թիվ 3

Անվանումը «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՊՓԲԸ

Բանկային հաշվեհամարները «Արդշինբանկ» հ/հ 121360000214

Տնօրենի (նախագահի)
անունը, ազգանունը: Նովակիմ Նովհանիսյան

Ի վկայություն սույնի, Նայաստանի Նանրապետության Էներգետիկայի հանձնաժողովը սույն Լիցենզիան տրամադրել է

«Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՊՓԲԸ

(ընկերության անվանումը)

ք.Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ. թիվ 3

(իրավաբանական հասցեն)

Գրանցման ամսաթիվը

« 28 » հունիսի 1999 թ.

Գրանցման համարը

№ 0014

Ս.ԱՐԱԲԱԶՅԱՆ

Նանձնաժողովի պատասխանատու անձ,
մեթոդաիրավաբանական
վարչության պետ՝

**ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ
Լիցենզիա N 0014**

տրված է _____ **«Երևան ՋԷԿ» ՊՓԲԸ**
(լիցենզավորված ընկերության լրիվ անվանումը)

Ցուցակ

ջերմային էներգիա արտադրող էներգափոխակայանքների

Սարքավորումների (բլոկի) անվանումը և կայանային համարը	Սարքավորման մակնիշը	Սարքավորման նոմինալ հզորությունը կամ արտադրողականությունը	Շահագործման հանձնելու փարթիվը
Շոգեփուրբին N 1 Շոգեկաթսա N 1	ՍՏ-60-130 / 13 ՏԴՄ - 84	60 ՄՎկր 420 ք/ժ	1963
Շոգեփուրբին N 2 Շոգեկաթսա N 2	ՍՏ –60-130 / 13 ՏԴՄ - 84	60 ՄՎկր 420 ք/ժ	1963
Շոգեփուրբին N 3 Շոգեկաթսա N 3	Ք-50-130 / 13 ՏԴՄ – 84	50 ՄՎկր 420 ք/ժ	1963 1964
Շոգեփուրբին N 4 Շոգեկաթսա N 4	ՍՏ –60-130 / 13 ՏԴՄ - 84	60 ՄՎկր 420 ք/ժ	1964 1966
Շոգեփուրբին N 5 Շոգեկաթսա N 5	ՍՏ –60-130 / 13 ՏԴՄ – 84	60 ՄՎկր 420 ք/ժ	1966 1967